



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

431

L6n
1503

190

431

27

1999

1/63 63



№ 431 1931 г. 2-го квартала
запасов

ԱՐԵՎԻԿԱՆԱՄԵՐՈՅԱՑԻՈՅ

ԱՐԵՎԱՏՅԱՆ

ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ՊԱԼՍՏԵԱՆ ՎԵՐԱՅ-

Գոյսեց գրաբառից աշխարհաբառ

ԽՈՐ. ՔՈՀ. ՄԻՐԶԱՅԵՒԹԵԱՆՑ:



1874

Центр. Енбюст.-Чит.
Арм. Благ. Общ.



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Բ

ՎԵՀԱՓԱՌ ԿՈԹՈՒՊԼԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԵՂՋԳԱՅ Դ.

ԹՐԱՎՄԱՐՔ ՎԵՀԱՓԱՌ ԿՈԹՈՒՊԼԻԿՈՍԻ 15 ՀԱՅՈՑ 1874
Ամբ ՎԵՀԱՓԱՌ ԱՅՀԱՄԱՅԻՆ:

Дозволено цензурою Тифлісь. 25 июля 1874 года.

41503-աս

28. 1505

ՄԵԾԱԳԱՏԻՒ

ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՅՈՑ

ԴԻԼԴԱՐԵԱՆՑԻՆ.


ԲԱԴՈՒԱՅ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆՓՈՓՈԽ ԱՆԴԱՄԻՆ

ԱՆԱՊԱՎ ԱՐՏԱՎ.

ՆՈՒՐՈՒՄ է

ԹԱՐԳՄԱՆՈՎ.



Основ. 1894 г. Тифл.
БИБЛИОТЕКА
Д-р Влаготв. О-ва на Кавк.

Ի՞Շ ԱՆՁԱՐԳԻ ԲԱՐԵԿԱՄ՝

Պարոն Գրիգոր Դեկտանց!

ЦЕНТР. БИБЛЮТ.-ЧИ
АДМ. БЛАГ. ОБЩ.

Կարդալով՝ Ներմէս Համբրոնացւոյ Սուրբ
Հռղեղալստեան վերայ զբած սոյն Ներբողը նոյն
տօնի օրում սուրբ Տաճարի մէջ, յշացաւ իս-
կոյն ինձանում մի միտք- այն է թարգմանել
դորան զրաբառից աշխարհաբառ, որպէս զի,
նախ յայտնի լինի ընթերցողաց սուրբ Հոգւոյ
դալստեան մեծ խորհուրդը, և երկրորդ՝ մատ-
չելի լինելով՝ հասարակութեան այդ Ներբողի
իմաստը՝ փառաւորվի սուրբ Երրորդութիւնը
և օրհնուի հեղինակի անմահ անունը և քաղ-
ցըր յիշառակր:

Ներսէս Լամբրոննացին Ներսէս Շնորհալու
քրոջ որդին կը Պահլաւունի ցեղից. նա XII-Եր-
րորդ դարու երեսելի Հայ մատենագիրներից մէկն
կը, որ հռչակված է արդէն պանծալի անունով
իւր զրախանական հարուստ աշխատութեամբն և
ձմեռապլից առենապահնութեամբը : Որին կվկայեն
նորու տանեն մի զրու ածքի ընթերցողները :

Ողբաման՝ Տէր, որովհեաև մեծ է Ձեր սերը
և զգացմունքը գեղի հոգեւորակամնութիւնը, մեծ
է նոյնալիս և Ձեր ցանկութիւնը տեսանել նորա
բարոյական և արժանաւո՞ր պաշտօնեաների թիւը
շատացած, որը ինձ յայտնի է շատ տարիներից
սկսած, ուստի ցանկամում եմ այս զբքուկի
ճակատը պատկել Ձեր անունով։

Ես չեմ կարող մռաւանալ և չեմ կարող
զբուանի տակ գնել մռաւանդ Ձեր աղեիւ հո-
գուց այն զգացմունքը, որը արդիւնաւոր էք
կայտուցանում 1868 թուականի Սուրբ Մեռուի
օրհնութեան հանգիսի և Վեհափառ Հայրա-
պետին՝ Պէտրի 4 րդ Կաթուղիկոսին ներկայա-
ցած օրից սկսած մինչեւ ցայսօր և կացուցա-
նելու էք ոյսուհետեւ, որքան կինդանարար հո-
գին հիւրինկավլու է Ձեր մարմնոյ մէջ՝ պատ-
ճառեցը նորան կեանք, ըստ նմին և ես ցան-
կամում եմ Ձեղ կեանքի երկարութիւն, առող-
ջութիւն և յաջողութիւն, որը օգուտ է ինչպէս
մեր Ազգապարծան սուրբ Աջմիածնի Աթոռին,
որին ու խաել էք մինչեւ 'ի մահ, նոյնպէս և
աղբակիցներից։

Տպուորված կմնան և իմ սրախ տախտա-
կի վերայ Ձեր այն խօսքերը, որ արտայապաւում
էին շատ անդամ ինձ համոզելու դժամանակը

դէպի քահանայական սուրբ պաշտօնը, որի հա-
մար սառն էր իմ սիրար, թէ ու նրավհետեւ Դուք
ընարել էք Ձեղ ուստուցական պաշտօնը, ըն-
դունեցէք և քահանայականը, որ ցանկամում
են Ձեղ, որով կարող էք օգուտ բերել բաց
'ի հայ մանուկներին և նոյա ծնօղացը հոգե-
պէս և բարոյապէս։"

Ընդունեցէք, խնդրում եմ, այս փոքրիկ
լումայն Ձեր անուան յիշատակի համար, և
եթէ ծանրութիւն ինչ նկատելու լինիք ոճի և
թարգմանութեանս վերաբերմանք, ներեցէք որ
այլապէս լինիլ չէր կարելի հեղինակի բարձր
մոքի և բարձր առարկայի վերայ խօսելու պատ-
ճառաւ, և եթէ զորանից աւելի զիւրին և
հասկանալի բառերով թարգմանէի այն ժամա-
նակ չէր ունենալ այն քաղցրութիւնը այն ճա-
շակը, ինչպէս ունի բնագիրը։

Ի 25 Մայիսի

1874 ամ:

Իսակուս:

Ձեղ 'ի սրահ յարգող և

մշտապէս բարեկամ

Ասորին Քահ. Արքայականց:

ՆԵՐՍԻՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

ՆԵՐԲՈՂԸ

ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ ՎԵՐԱՅ:

Որտիս սիրոյ բաղձանքից ստիպված
նուիրում եմ իմ աղքատ մտքի խօս-
քերը այս մեծ օրին. մասնակցե-
ցէք իմ տկարութեանը՝ ազօթքի
պարգևները, ո՞վ հանդիսացեալ ժո-
ղովուրդ:

Ճուէք ինձ աշխարհքին այսօր
տրուած շնորհըք, որպէս զի, աներ-
կիւղ կցեմ իմ անձը Աստուծոյ գիտու-
թեան իմաստից խորը և սեղանաւո-
րեմ հոգիներին պարարող անապա-
կան կերակուրը:

Առատ շնորհը է թափուել այսօր

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1898
ՏՐԵՅԱԿԱՐ. ՅՈՒ.

երկրի վերայ, մաղթենք, որ նորա
նշոյները ճառագայթեն մեր մըտ-
քերի հայեցուածների մէջ, և առաջ-
նորդէ մեզ հետեիլ շաւղաց Աստուա-
ծային խօսքերին։

Ավսքանչելեացս, հրեշտակները որին
ցանկանումէին աղօտ (մթնաշաղ կերպով)՝
ակնարկութենով նկատել, այսօր նա
շնորհըով իջնելով այս ստորին գա-
ւառը՝ տարածուեցաւ։ Աւ ո՞վ արդեօք
չեյտսալ նորա պարզեները վայելելու։

Սուրբ Հոգին, Որին Աերովքէից և
Քերովքէից դասքն կարօտութեամբ
բերանաբաց լինելով նորա որբանու-
թինը չկարացին նկատել այսօր
արդարե ցած գալով լիացրեց մարդ-
կանց իւր անապատմելի խորհուրդնե-
րը իմանալու։ Որոնց հետ և ես
սպասաւորում եմ նորա առատութե-

նից խմաստութեան կախթիները ըն-
դունելու։

Արդարե ձգեց մարդը իւր ձեռը
դէպի կենաց փայտը, որ յառաջ
յետ կացաւ նրանից՝ առաւ, կերաւ, և
յաւ իսենական կենդանութիւնը սեպ-
չականեց իւր անձին։

Աւ ո՞վ է արդեօք այս շնորհըի միջ-
նորդը և մատակարարը, ո՞չ ոք, եթէ
ոչ մեր Տէր Յիսուս Քրիստոսն,
Աւանին, Լոյսն, Շանհապարչն, Դու-
ռըն, Հովիւն, Քահանայապե-
տըն, Միջնորդն, Բարեխօսն, Յոյսն,
Կարապետն, որ անցաւ երկնքից
երկինք ինքնիշխան զօրութենով և
մտաւ հրաշալի կերպով և անպատ-
մելի զարմացմամբ վարագուրի ներ-
քին կողմն, և դրաւ Հօր Աստո-
ծոյ առաջ մարդկանցից ստացած



առհաւատչեայն (դրանք) մեզ համար
բարեխօս։ Ուստի վոխարէնը առնե-
լով առատ ձիրք՝ տարածեց երկրու-
մը, որից և մենք խմելով զմայե-
ցանք և մոռացանք աւելի նախա-
մօր Եւայի տրտմութեան ցաւը։

Այսօր աշխարհի խարէութեան
խաւարով ընկղմուածներս՝ հոգինե-
րին պայծառացնող և կենդանեաց
երկիրը առաջնորդող խմանալի լոյսը
ընդունեցինք։

Այսօր՝ այն տրտմութեան զդես-
տը, որ սոսացանք մեր հայր Ադա-
մից, հանեցինք, որովհետեւնոր Ադա-
մը զարդարեց մեզ ոսկեհուռն զարդա-
րանքով և պսակով։

Այսօր՝ զարմանալի Արակը Երկ-
նային ամենապայծառ ճառագայթ-
ներով երկրումը յայտնուելով ար-

ծարծեց, այրեց մարդկանցից այն
փուշը և մեղաց անէծքի սաստիկ պա-
տիժները։

Այսօր՝ հրեղէն լեզուների վիճակին
արժանի զտնուած այն ազգը, որ
հաւասար էր անմիտ անասուններին,
դարձեալ սոսացաւ Բանի կրկին շը-
նորհքը իւր Ատեղծողին պատկերա-
կից լինելով։

Այսօր՝ հոգւոյ քաղցր ցողի (շաղի)
սաստիկ հնչեմը որոտաց երկրումը,
և անէծքի բարբառը՝ որ շարժուե-
ցաւ սորա (երկի) վերայ, վոխեց օրհ-
նութիւն։

Այսօր անուշահոտ կնդրկի բուր-
ման անապականութեան հոտը ծա-
ւալելով՝ մահի մառ ախլապատ թան-
ձըր ծուխը յեղափոխեց և հաստա-
տեց անմահութիւն։

Այսօր՝ զգալի պատարագի՝ որը
ուղարկեց այս զգալի աշխարհը դէպի
այն իմանալի գաւառը (Նրկն.ք), փոխա-
րէնը ստացաւ առհաւատչեայ (դրաւ)
իմանալի Հոգին, որ նորոգեց սորա
զգալի տարրը աննիւթ քաղաքի
պատկերի ձեռվէ:

Ով որբան մե՛ծ է երկնայինների
և երկրայինների տուրեառութեան
շահը, պատճառ, սորա տուին մարմին,
և նորանցից առին Հոգին. Ազամայ
տունը ընծայեց Քրիստոս. Աստո-
ծոյ տունն էլ տուաւ նորա փոխա-
րէն միմիթարիչ տուրը Հոգին:

Մարդիկ մարդը տուին Աստոծոյ,
Աստուած էլ Աստուած տուաւ մարդ-
կութեանը. Այս է տուրիառութիւն,
Աստուծոյ արդարութեանը քարոզ:

Առաջ ծառաներիցս հնագանդու-

թեան պատարագ, և ապա Տէրից
խաղաղութեան պարզեներ:

Առաջ մեզանից Խաղաղութիւ-
նըն Քրիստոս, որ քանդելով ցանկի
միջնորմն՝ երկուսը մի արաւ, և ապա
Աստուծոյ աւետեաց հնչումն, որ աւե-
տարանեց խաղաղութիւն հեռաւոր-
ներին և մերձաւորներին:

Առաջ Որդին նուաճելով ընու-
թեանս՝ Հօր կամքը դէպի քաղցրու-
թիւն շարժեց, և ապա Հոգին գալով
երկրաւորներիս երկնայինների հանդի-
սին խառնեց:

Առաջ Քրիստոս խաչի մահուանը
հնագանդելով թշնամութիւն քաշեց
դէպի իւր անձն, և ապա Հոգին մեր
տկարութեանը օգնութիւն համելով
դէպի Հայրը բարեխօսեց:

Լայն խորհուրդ և Աստուծոյ

գիտութեան ընդարձակ առաւելութիւնը կ'տեսնուի, եղբայրնե՛ր, որովհետեւ սարերն են՝ Վորա արդարութիւնները և իրաւոն ըները՝ շատ խորեր, ինչպէս վկայեց մարդարէն:

Պօղոսը մաղթումէ, որ աշակերտները ընդունեն այս իմաստութեան հոգին, որ զարմացնումէ քննողներին և շատացնում ցանկութիւն և փափադդէպի Աստուած:

Ինչո՞ւ համար էր Որդույ մարմնանալը, և ինչո՞ւ մարմնանալու ժամանակ իսկոյն փրկութիւն չեղաւ աշխարհին: Ինչի՞ համար էր անպարտականին նախատանքի խաչը, և ինչո՞ւ այնուհետեւ մարդիկ կատարեալ չեղան:

Ինչո՞ւ համար Որդույ հետ մանգալով և բնակվելով աշակերտները անիմաստ մնացին, և ի՞նչ պատճառի

ոգույն իջանելու ժամանակ միայն՝ այնքան չորհրով զարդարված պըսակեցան:

Ինչո՞ւ համար Վրիստոսի այնքան մեծամեծ հրաշքներովը դժուարութեամբ էին հաւատացնում, իսկ այսօր Պետրոսի մէկ բարբառովը երեք հաղարներով են աշակերտ լենում, որը քննել արժան է, և Աստուծոյ իմաստութեան գանձը մարդկանց սրտերի շտեմարաններումը ամփոփում (հաւաքում), որ կարողանան յառաջ սրտով հաւատալ արդարութեանը և ապա բերանով խոստովանել փրկութիւնը:

Որովհետեւ այս փրկագործութեան եղանակը ուժով զօրութենով չէ, այլ իրաւոնքով և արդարութենով:

Որպէս զի, Աստուծոյ ամենա-

Կարող զօրովթեան հետ և ամենաքաւական ողորմովթինը հաստատուի երկնքումը և երկրումը:

Որովհետեւ՝ Առ որ բարի ստեղծեց մարդին իւր բարերարովթեան պատկերովը, երբ տեսաւ նրան բանսարկուի նախանձից խաբուածու մեռած, արդար իրաւոնքով չկամեցաւ խաբէութենով բռնուածին թովնել որսովի ձեռքումը:

Ասաց համագոյական Բանին, ցա՛ծ իջիր, խառնուիր այն բնութեան հետ, որին մենք բարի ստեղծեցինք. չինի թէ բնաւորապէ՛ս բղխէ այն չարովթեան ծուխը, որ իմ առաջը բարդվումէ:

Խմացի՛ր որ եթէ բնական կրթերով տկարանում է իմ օրէնքի մօտ, անմեղաղբեի է այն պատուհախից,

որ նա կարգով բերում է նորա վնրայ:

Բայց եթէ բնութենից օտար է և յետոյ եկած մտած են այն արկածները (գիտուածներ), խարողին յանդիմանելով դատապարտի՛ր, և նորան ողորմովթենով և զթութենով նորոգի՛ր:

Այս պատուերը ստանալով Բանը Հօրից՝ խառնուեցաւ մարմնու հետ, մարմինն էլ խառնուեցաւ Աստուծոյ հետ. Խառնումն անպատմելի, և էութեանց յատկովթինը անշփոթ (անխառն): Այն պատճառի, որ բոլորովին մարմնոյ ընթացքը անձամբ անձին փորձելով ճանաչէ:

Մնաց նորանով երեսուն տարի, և չխառնուեցաւ իւր բնութինից օտար ներգործութեան հետ:

Եկաւ Յորդանան, և Հօրը նորի-

բելով ամենակատար մաքրութիւնը
ընդունվեցաւ Առանից հաւասարա-
պատիւ սիրելի որդի:

Գնաց հոգւով բանսարկու թշշ-
նամուն դէմ կոռուելու, և ճանաչեց
թունաւոր օձի նետերի մեքենաները,
որ խաբումէր սորանց բնութեան
օրէնքով մեղքի վիճը զլորելու:

Պահեց իրան կերակուրներից
արդարոց դասուց պէս, և թոյլ տու-
աւ մարմնոյն շարժվել ինչպէս ցան-
կանումէ: Բայց թշնամին մօտը
կանգնելով սպասումէր, և որքան Ա (Քրիստոս)
ամանիշխան կամքով չէր
փափակում չէր ձգտում դէպի
կերակուրը, նա (փորձողն) էլ իւր մե-
քենաները գործ դնել դէպի նպա-
տակը չէր կարողանում համարձակվել:

Երբ որ շարժուեցաւ, սրած նե-

տերը իւր ամանից դէպի Տէրը ձգել
յուսացաւ:

Հայց շինիր, ասումէ, այս քա-
րերը քո զօրութենով որ այդ քան
պահեցողութեան համբերութիւն ու-
նեցար, և եղի՛ր ստեղծող՝ հակառակ
Աստուծոյն:

Եւ լսելով թէ գրուած է, Աս-
տուծոյ խօսքով կապրէ ամեն մարդ,
քան թէ հայով հնարում էր գրքե-
րով որաալ նորան:

Այն ժամանակ ճանաչեց լարած
թակարթը (թալակը), խայտառակեց
նորա մեքենաները, պատառ եց այն
փաթաթած թակարթը, որով որ-
ում էր մարդկանց:

Պարզեց իւր Հօր և հրեշտակնե-
րի առաջ, և ինքնիշխանութեամբ
՚ի բաց հալածեց խաբողին մեր



Խաբուած բնութեան օրէնքով:

Դանիէլ մանուկը արդար դատաստանով դատեց. ամաչացրեց չար ծերերին, որ զբարտում էին մարդկութեանը, որոնք խրեանց մեղքերը նորա վերայ էին գցում:

Այ. Հնացած, ասումէ, չարութեան օրերով, այժմ եկան հասան քո մեղքերը, որ գործում էիր առաջուց, որ դատում էիր անիրաւ դատաստանով, և մարդկան անմեղ բնութիւնը քեզ մասնակից էիր վճռում:

Քո չար նախանձը խաբեց քեզ և մարդատեցութեան ախտը դարձուց քո սիրալ:

Այդպէս էիր խաբում մարդկանց որդիներին, և նորա երկիւղի պատճառաւ մասնակցում էին ձեր կամքին:

Բայց Երկնաւոր Հօր որդին

յանձն չառաւ ձեր անօրէնութիւնները:

Եյս ասելով և ոտի տակ կոխ տալով ծերացած օձին՝ յայտնեց խր Հօր և հրեշտակների յառաջ առաջին յաղթութիւնը և մեր բնութեան անմեղութիւնը:

Եյն ժամանակ մօտեցան հրեշտակները և պաշտեցին նորան ինչպէս հարկաւորն էր, երբ որ յաղթեց չարին բնաւորականովն, և արդարացած բնութենովը տիրեց հակառակորդ դեերի բնութեան վերայ զօրաւոր ձեռքով.

Երդ՝ որովհետև նա միայն գըտնուեցաւ չարից անփորձ և հաճոյ Եստուծոյն, այն պատճառաւ մկաւ կանչել մարդկանց դէպի կենաց ապաշխալութիւն արքայութեան յուսով:

Խոկ նոքա խարեւոթենից խարփած դժուարանում էին հետևել կանչողին, և ծանր էր թուում դէպ ՚ի երկիր ընկղմուածներին՝ դէպի երկինք նայել. և աշխարհիս ցանկութենով խարուածները չէին ախորժում (սիրում) վերին փառքը և բոնութենով (ուժով) ձգել քաշել անկարելի էր նրանց անձնիշխան Այտեղծողին. նըշաններով (հրաշքներով) վարդապետութենով (քարոզութենով) էլ քիչերն եկան դէպի հաւանութիւն:

Ապա ի՞նչ անէր: Ո՞վ սքանչելեացս, որովհետեւ պատիժների պարտական էին մարդիկ, և պէտք էր պատիժը հատուցանել և ապա Աստուծոյ արդարութենից ողորմութեան արժանի գտնուէին:

Այս՝ որ անպարտական էր իւր

Շօր յառաջ, դործ դնելով շատ իմաստութիւն, բոլոր պարտականներիս վոխանակ մեռաւ, և ջնջելով պատառեց մեր յանցանքի ձեռագիրը: Խճաւ դէպի դժոխք Կա, որին անկարելի էր մահից բռնուիլ և արձակեց մեռեալներին:

Կա ինքն եկաւ կենդանիների մօտ, և հաստատեց նորանց. և որոնք որ Աղամայ յանցանքով մահի դատապարտութեան տակ էին, իւր անմեղովթեան շնորհքով դարձրեց դէպի կեանքի արդարութիւն և դէպի կենդաննեաց երկիրը:

Որովհետեւ այսպէս ենք իմանում Պօղոսից յայտնուած Աստուածպաշտութեան մեծ խորհուրդը, որ երեցաւ մարմնով արդարացաւ հոգւով յայտնուեցաւ հրեշտակներին, քարոզ-

վեցաւ հեթանոսների մէջ հաւատարիմ եղաւ աշխարհին և համբարձաւ փառքով:

Եւ մտնելով վարագուրի ներքին կողմն՝ ընծայեց Հօրը պատարագ՝ մեծ Քահանայն իւր պատուական արինը, յայտնեց և խաբողի խարէութիւնները, և բարեխօսում էր խաղաղութիւն անել մարդկանց հետ:

Եւ բարի Հայրը հաւանելով իւր սիրելի որդույ զարյանալի գործին, և բանդելով առաջվայ հօր դատապարտութեան կնիքը, տուաւ Առան Հոգին, որ սիռէ տարածէ իւր արինով գնուած (առուած) հօտի վերայ, և լուսաւորէ նոցա մտքի աչքերը վերին յուսովը:

Այն ժամանակ Միածինը վեր առնելով Ասղիմում ցողած (շաղած)

Միսիթարիչը ձիւնացրեց նորանում հաւաքված թագաւորներին նախագուշակ մարդարէի ասածի պէտ:

Որ եկաւ և բնակվեց մեր սրտերումը և լուսաւորեց Քրիստոսի սիրոյ առաւելութեան լայնութիւնը և երկայնութիւնը:

Եւ որովհետեւ ձրի էր շնորհում Քրիստոսի մահուան փոխանակայն պատճառաւ հաւասարապէս արժանաւորների և անարժանների վերայ տարածվումէ:

Ուստի և Պետրոսի մէկ բարբառով այսօր երեք հազար անձնութեան աշակերտում։ Ապա Ճմարիտ վկայեց զարմանալի Բանն, թէ այս մեծ օրվայ շնորհքը կլինի։

Որ ինչպէս սերմաններուց աւելի ժողովեն է ցանկալի, այնպէս և

Վրիստոսի խորհրդոյ ամեն սերմերի պտուղն այսօր է քաղվում։ Ասմինքն սուրբ Հոգին, որի համար ինքըն վլայեց. թէ նա կոտիրեցնէ մեզ և կյիշէ իրանից ամեն ատուածները։

Այս քաղցրութեան ցօղը զուարթացրեց Վրիստոսի խօսքերի բոյսերը, և օրհնելով պսակեց իւր անօրինական գործերի տարիները, որի համար աղաղակումէ եկեղեցին, ձմեռն անց կացաւ, մեր այդիները ծաղկեցան և հոտ բուրեցին։

Այս առաւօտ նայեց Երկնաւոր Հայրը դէպի երկիր, որին խմացրեց սուրբ Հոգւոյ յորդառաւու գետից, և վթթելով ծաղկեցրեց առաքինութեան զանաղան բոյսեր շատ տեսակ տունկերի արմատներից, ինչպէս ուսումէ մարդարէն։

Ահա՝ չնորհ, որ չի չափվում. և պարզե, որի գործերի կշեռը չի գուգակցում (հաւասարվում)։

Ահա՝ տուր, որի բնութեան իսկութիւնը չի շրջափակվում և չնորհ, որի գերաղանց մոքի զեղումն (լիութիւնը) չի սահմանափակվում։

Ահա՝ առաւ ողորմութիւն, որ աշխարհիս ամեն թագաւորութիւն հաւասարվելով փոքրէ գտանվում, և միսիթարութիւն, որին մարմնաւոր զբաղմանց ուրախութիւն չի հաւասրվում։

Որովհետեւ, ո՞վ արդեօք աշխարհիս տիրելու ժամանակ կարողացաւ և անապականութիւն ստանալ կամ ո՞ր թագաւորը կարողացաւ ձեռարկել մահը կեանքի փոխելու. կամ ո՞ր մարմնաւոր երանութիւն

կարողացաւ յաւիտենական կեանքը
ընդգրկել: Եսկ Ավա այսօր Առաքե-
լոց դասի վերայ իջնելու ժամանակ՝
զօրացրեց նոցա ձեռքերը, որ բաշ-
խեն սրանց (այդ բարութիւնները) բոլոր
աշխարհին:

Առքա Այրանով լցուած՝ ստուերով
(շուաքով) հիւանդներ բժշկեցին, թաշ-
կինակով (աղլուխով) ցաւեր փարատե-
ցին, ձեռքով մեռեալներ վեր կացը-
րին, կաղերին գնալ տուին. կուրերի
հոգւոյ աչքերը աւելի բան թէ մար-
մնոյ աչքերը լուսաւորեցին, դէպի
երկինք հրաւիրեցին. անվախճան փառ-
քին մարդկանց ժառանգորդ արին:

Ահա՛ ուրեմն յայտնի եղաւ, թէ
երկրաւոր տուրքերից և ո՛չ մի ինչ
հաւասար գտնուեցաւ երկնային տուր-
քին, որ ո՛չ միայն բանական ազգը

սորան ընդունակ եղաւ, այլ և ան-
շոնչ տարերքն անգամ սորանով
զօրացած՝ մարդկանցից բարձր դրտ-
նուեցան: Որ նոյն ինքն իջանելու
ժամանակ՝ յառաջ տունը լցրեց զար-
մանալի կերպով, և ապա հանգեաւ
նորանց վերայ, որոնք սիրով նստած
էին նորա մէջ:

Որովհետեւ ասումէ, երբ որ լրացան
Պինտէկոստէից (*) օրերը, ամենքը
միաբան միասին էին, յանկարծ երկն-
քից իջնչիւն եղաւ, և սաստիկ հողմի
(քամու) պէս գալով՝ լցրեց ամեն

(*) Պինտէկոստէ կիշանակէ հինգ տասն(50):
Այսինքն Քրիստոսի յարութիւնից յնտոյ, երբ
որ անցաւ յիսուն օր: Յարութիւնից քառասուն
օր անցած՝ համբարձաւ, և տասն օրից յնտոյ,
որ յարութեան յիսուն երրորդ օրն էր, սուրբ
Հոգին իջաւ. Վերնատուն Առաքելոց վերայ:

Ճ. թ.

տունը, որի մէջ նստած էին. Եւ նորանց երեւեցան ինչպէս կրակից բաժանված լեզուներ, և նստան նորանց ամեն մէկի վերայ, և լցուեցան ամենքը սուրբ Հոգևով, և սկսան խօսել այլ և այլ լեզուներով ինչպէս Հոգին նորանց խօսիլ կտար:

Միասին միաբան էին, ասումէ, որպէս զի, ցոյց տայ, որ ո՛չ թէ միայն տասներկուան էին այնտեղ, այլ և Աստուածածին կոյսը նորանց հետ էր այն կանանցով, որոնք պաշտում էին Յիսուսին Գրալիւայում. որոնք և տեսնող եղան յարութեան. որոնց հետ և եօթանասնից գունդը իրանց ամեն ծանօթներով:

Այն ժամանակ եկաւ նորանց վերայ սուրբ Հոգին, ինչպէս Քրիստոս յառաջ խոստացաւ ասելով.

ահա՛ ես կուղարկեմ իմ Հօր տւետիքը ձեր մօտ, և դուք կնատէք Երուսաղէմ քաղաքում, մինչև որ կհագնէք (կստանաք) զօրութիւն բարձրից:

Եւ որոտող հողմի հնչիւն հանեց, որով ցոյց էր տալիս հեղման առաւելութիւնը. Դարձեալ նոյն Հոգին էր, որ սկզբումը ման էր զալի ջրերի վերայ. լցրեց տունը իմանալի զօրութեան հետ և զգալի կրակի տեսակով տղայարարոներին զարձացնելու համար:

Եւ ապա բաժանուեցան այն կրակիցն լեզուներ, և իջառ նորանցից ամեն մէկի վերայ, որով նշանակում էր մի որիշ տեսակ լեզուախօսութեան շնորհը պարզեները:

Ուստի և նոցա զգալի մարմնոյ զրայարանաց վերայ տեսանելի հրե-

զին լեզուները իջանելու ժամանակ
նոցա մոքերը խմանալի զօրութենով
խմաստնացած՝ սկսաւ ուրիշ տեսակ
խօսքերով շարժել նոցա լեզուները.
ըստ որում ասում է, խօսում էին այլ
և այլ լեզուներով, ինչպէս և Հոգին
տալիս էր նորանց խօսել:

Ոչ թէ այն պատճառի, որ լեզուների շնորհքը նախամեծար էր, այլ
որովհետեւ չկար նորանց մօտ մի ուրիշ
շնորհք, որով զօրացած կարողանային
հրատարակել:

Բայց մի ուրիշ կերպ խօսելով
քաղաքի բոլոր ամբոխին բերում
հաւաքում էր նորանց վերայ զարմանքով: Բայտ որում ասում է եկան
միաբան բաղմութին և մէկ մէկու
վերայ սաստիկ հաւաքվեցան և մեծ
զարմանքով զարմանում էին ամենքը,

ոմանք էլ նոցա զարմանալի այլափոխման պատճառաւ ծաղը անելով
ասում էին, թէ նոքա արքած կլինին:

Վամենքը այսպէս էին խմանում
այս շնորհքի համար, թէ չներդործեց
Հոգին իջանելու ժամանակ նորանցում Քրիստոսի խոստումն, այլ շնորհեց լեզուներ: Ոսովհետեւ նա չ'ասաց
թէ լեզուներ կխօսիք Հոգւովը, այլ
թէ կսովորեցնէ ձեզ և կյիշէ ձեզ
այն ամենը, ինչ որ ասացի ձեզ:

Որոնք եթէ սորան ստացել էին
սկզբումը, այսպէս տակնուվրա չէին
լինիլ, և բաղմութեանը իրանց մի
ուրիշ տեսակ խօսքերով չէին ձգել
՚ի նշան տեսութեան:

Որոյ համար Վամենիմասան՝
յառաջ ինչպէս մանուկներին խաղերի
հանդիմների մէջ, այնպէս զարմա-

մանակի փոփոխութենով շփոթեց
նորանց:

Որովհետև նոքա՝ որոնք երեկ և
այսօր Գրալիկնացի գոեհիկ և շինա-
կան մարդիկ էին, աչա ասում են.
իմաստուն Հռովմայեցիների պէս
ճարտարաբանում են, ոմանք էլ Պար-
թեական հեռի աշխարհի խօսքերով
նորանց պատասխանում են:

Պետրոսը՝ որ Ավագառնառումի
մէջ էր ծնուած, լսում ենք, որ Հռով-
մայեցւոց լեզուն ճարտար կերպով է
խօսում:

Փիլիպպոսը՝ որ Գրալիկացւոց
Բետսայիդայիշն էր, Արարացւոց
բարբառովն է խօսում:

Յովհաննէս՝ որ Կաղարեթումն
էր մեծացած, ի՞նչպէս Աելիկեցւոց
բարբառովն մեղ հարցնում է:

Ճռովմասին էլ լսում են, որ Եթով-
պացւոց լեզուով մարդարէի խօսքերն
է յիշեցնում:

Եյն տիմար Ճռադէոսը՝ տեսէ՛ք
թէ, որքան գեղեցիկ մեծ Հայոց
բառերով իւր խօսքերն է քարոզում
ուսուցանում:

Շարդուղիմէոսը կարծես թէ
Մարքումն է ծնուած, նոցա բառե-
րովն է քարոզում:

Ան սքանչելեացս. մենք զանա-
զան զաւառներում ծնանք, և մեծ
աշխատութիւնով նորանց լեզուները
սովորեցինք. բայց սոքա՝ որ չ'տեսան
այն քաղաքները, առանց աշխատո-
թեան և նեղութեան նորանց բար-
բառներով են խօսում:

Ահծ է, ասում են, այս զարման-
քի արուեստը, և թէ ի՞նչ զլուխ

պիտի հանե, մենք չենք կարող նկատել:

Այն ժամանակ վերկացաւ Պետրոսը տասն և մի աշակերտների հետ միասին, և բարձրացրեց իւր ձայնը, և սկսաւ մարդկանց տարակուսութիւնը լուծել:

Ով ձրեաստանցի մարդիք, և դոք ամենքդ, որ ընակված էք Երոսաղէմում, այս ձեզ յայտնի լինի, և ականջ դրէք իմ խօսքերին:

Այս արբեցութիւնը գինույ արբեցութիւն չէ օրփայ երեք ժամկն ինչպէս դոք կարծում էք, այլ ուրախութեան բաժակ է և անապականութեան առհաւառչեայ (զբանշան), որի համար մարդարէքը նախադուշակել էին և ահա այսօր խորհրդի լրումն և կատարումն եղաւ:

Ով օրէնք ուսուցանողներ, և մարդարէների աշակերտներ, այս այն է, որ առված է Օովելեայից, որը միշտ կարդումէք, կատարվեց:

Ահա վերջին օրերումը Ծափեց Աստուած իւր Հոգուցը զանազան մարմնաւոր հասակների վերայ, և կմարդարէանանք:

Այս Կազմվեցի Օխուսը որ ձեզ մօտ երևեցաւ հրաշքներով և անմեղ տեղը խաչուեցաւ, բարձրացաւ դէպի երկինք, և նատաւ Աստուծոյ աջ կողմում, և այս սուրբ Հոգոյ պարզեները ստանալով Հօրիցը՝ մեր վերայ տարածեց:

Կա՛ երք փառքով բարձրանում էք դէպի երկինք, մեղ ուխտեց. և մոնելով երկինք՝ Հօր և Հոգոյն հաւասար նստաւ, և այս ասաց, Վա-

այն գործը, որ ինձ հաւատացիք, կատարեցի երկրումը, իմ չորդ անունը փառաւորեցի մարդկանց մօտ. շարի նախանձից ապականված մեր պատկերակիցը Աստուածութեանս բնութեան հետ խառնելով որբեցի զարմանալի կերպով:

Իմ մահը ոգորմելի և տառապեալ մարդկան ազգի փոխարէն տալով ազատեցի նորանց անէծքից:

Եւ այժմ նոյն մարմնով եկած երկիրապալութիւն եմ ստանում երկնաւորներից:

Այսուհետեւ զործելու ժամանակը քեզ է հասել ով իմ փառակից չողի, պէտք է և քո մարդասիրութիւնը ցոյց տաս երկրումը. այսուհետեւ մեր Աստուածութեան անունը քեզ ենք յանձնում յարգելու

մարդկանց մօտ: Իմ չայրը ներեց և թողեց այն պարագը, որով զու արգելուեցար թափուելու նորանց վերայ իմ մարմնոյ պատարագով:

Այս ստացաւ ինձ նորանցից առհաւատչեայ (զրաւ) և քեզ տալիս է նորանց խաղաղութիւն:

Յա'ծ իջեր այժմ, ով սիրոյ աղբիւր, նրանց մօտ սիրով, միսիթարի՛ր նորանց, որոնք այն պանդուխտ տեղումը օտար և անցաւոր կեանքով չարչարփում են:

Դարձրո՛ւ նորանց սրտերը դատարկ և անսպէտք մտածմունքից, որով ՚ի զուր շփոթում է թշնամին նորանց՝ նայելու այս բազմապատիկ օթևաններին, որ պատրաստեցինք նորանց համար:

Բաշխի՛ր նորանց առատ իմաս-

տութիւն, որ չարագործը չմրուրացնէ նորանց:

Ես մամնակից եղայ նորանց կարիքներին, և ճանաչեցի փորձով որ տկար և դիւրակործան բնութեան են վիճակված:

Այս պատճառաւ աղաչում եմ, անբաժանելի մնացիր նրանցից, և զօրացրու նորանց ամեն փորձանքի գէմ: Յետ քաշիր մարմնական կամքերը և զօրացրու նոցա մտքի կամքերը:

Քեզ եմ տալիս նրանց, քեզ եմ յանձնում նորանց. քեզ նորանց եմ խոստացել և այժմ քեզանով պընդացնում եմ ամենքին, որ 'ի զուր չլինի իմ արիւն թափելը նորանց համար:

Առատացրու նրանց մէջ, ո՛վ իմ համազոյակից չողի, բժշկու-

թեան, մարգարէութեան, վերինը խորչելու և ներբինը ատելու շնորհքը:

Ես թէպէտ և շատ անգամ խօսում էի նորանց հետ և պատմում երկնքի արքայութեան պատմութիւնը, բայց անքան չէին խոնարհեցնում իրանց ականջները սիրով լսելու:

Երբ որ մարմնական բժշկութիւններ էի կատարում, մեռեախներ էի յարուցանում, կաղերին գնալ էի տալիս, կոյրերին լուսաւորում էի, ամենքին սէրը դէպի ինձ մեծանալով շատանում էր:

Չողեկան հաց այսինքն իմաստութեան խօսքեր էի տալիս, ո՛չ ոք չէր զգաստանում:

Բայց երբ մարմնական հաց տոնի առատապէս, որ կշտանան, այնքան շատացան իմ սիրովը, մինչև

անգամ կամենում էին յափշտակել
ինձ և թաղաւոր կանգնեցնել իրանց
վերայ:

Այս է մարդկան ազդի մտքի
ճանապարհը, որը ես փորձեցի. տկա-
րացած են մտածելու այս վերին
բարիների համար, որ խոստացել եմ
իրանց:

Առքա ծանօթ չեն երկնային
փառաւորութեանը. բայց միշտ երկ-
րումը տատանվում քաշքաշվում են.
Նոքա կարծիքապէս են ընդունում
այս Ճմարտութիւնը, և այն է նոցա
համար վայելու կեանք համարուած:

Այս համար դու նորանց տղա-
յամտութիւնը յառաջ նշաններով
և հրաշքներով զարմացրու, և նոցա
կարծիքը դէպի հաւանութեան հա-
սատը բժշկութեան շնորհքով ուղղեր:

Քո առատութեան շնորհը մի՛ արգե-
լուր բաշխելու մեր Աստուածու-
թեան փառաց և գովութեան համար:

ՄԵ՛ծ բան է, որ ինչպէս երկին-
քը նոյնպէս և երկիրը լցնուի մեր
Աստուածութեան փառքովը, ինչ-
պէս հրեշտակներ նոյնպէս և մար-
դիկ ունենանք մեր անուանը օրհնա-
րանողներ:

Զարմաննը չէ, եթէ մեր մոլոր-
ված արարածը մեր բազմապատիկ
զօրութենուիր մեզ հպատակացնենք:

Արդ ազաշում եմ ցա՛ծ իջեր
ցա՛ծ, որովհետեւ տարակուատութիւնը
պաշարել է նորանց:

Փոքր ինչ մահուանս տնօրէ-
նութեան ժամանակը հեռացայ նո-
րանցից, ինչպէս ծննդականի երկունք
(ցաւ) պատեց իմ աշակերտներին,

մինչև որ շուտ յարութենիցս յետոյ
միսիթարեցի նորանց:

Տամն ու մէկից մինը այնտեղ
չէր, տամնի վկայութեանն էլ յարու-
թեանս համար նա չէր հաւատում,
մինչև որ կրկին յայտնուեցայ և կող-
քիս խոցուածը նորա մոքին հաւատ
տալու համար շօշափել տուի:

Եւ այժմ իմ ճանապարհորդու-
թեամբը գէալի երկինք, նոցա կար-
ճամտութիւնը թո՞ղ չգայթակղուի
Քո միսիթարութեան յուտոյ վերայ,
որ ես խոստացայ:

Ա ասնորոյ Դռու շուտ արա, զնա՛
միսիթարի՛ր իմ որդիներիս և աշա-
կերտներիս: Գնա՛ հանգատացի՛ր նո-
րանց մէջ, ինչպէս ես խոստացայ, և
քարոզելով յիշե՛ր նորանց այն ամեն
խօսքերը, որ ես ասել եմ:

Այն ժամանակ նետի պէս թռչե-
լով Ամենակարող զօրութիւնը, փրո-
կանան առատութիւնը, հեղութեան
աղքիւրը, բարութեան Հոգին, մար-
դասէր Ընորհը, Աստուծոյ առատու-
թեան հեղումն, կենդանարար բրդ-
իսումն, Աստուծոյ պարզերը, ճշմարիտ
խաղաղութիւնը, մարդարեներից քա-
րոզուածը՝ միսիթարիչ սուրբ Հոգին
անցնում էր ահեղ որոտմունքով ան-
մարմին խումբերի գասակարգու-
թիւններից. Երկնային զօրքի նահա-
պետութիւններն էլ զարմանալով
զարմացել էին սորա վերայ:

Ա ամն զի, նոքա՝ որոնք ցան-
կանում էին ազօտ կերպով տեսանել
տեսան խկական էութենով դիմած
(Եկած) և սփռուած մարդկան աղջի
վերայ:

Որովհետեւ ցած իջաւ բոլորովին չողւոյ անձնաւորոթիւնը այսօր Առաքելոց դասի մէջ, ինչպէս Միածինը սուրբ Առւախ արգանդի մէջ:

“Եա՛ որ եկաւ, եւ չբաժանուեցաւ, այլ մնաց Քրիստոսի եկեղեցւոյ մէջ իւր փեսայի ճշմարիտ խոստման պէս, որ ասաց, «Ձեզ հետ կընակվի և ձեզ հետ կլինի յաւիտեան»:” Եա՛ որ և զօրացրեց այսօր Առաքեաներին, և նորանց մատակարարութենովը բոլոր աշխարհին:

Որովհետեւ և Սորան աւելի քաղցրացաւ (դուրեկան եղաւ) մարդկան փրկութեան ճաշակը. որոնց հետ մնաց և բնակուեցաւ նորանց մէջ:

Ուստի և Պետրոսը կրելով (ունենալով) իրա մէջ սուրբ չողին՝

Անանեայի ստեղծ՝ մարդո՛ւն սուսասել չէր համարում, այլ Աստուծոյն: ”Ինչո՞ւ համար, ասում է, ձեր մտքումը դրիք փորձել Աստուծոյ չողին:” Ինձ խարել կամենալով, մարդկան սուտ չասացիք, այլ Աստուծոյն:

Սորա շնորհքը իջաւ Ատեփաննոսի վերայ, երբ որ Առաքեաները ձեռք դրին նորա վերայ. դորանով նա զօրացաւ նշաններ և մեծ մեծ հրաշքներ անելու:

Սա արդարեւ որպէս եկեղեցւոյ թագաւոր կարգում էր Պօղոսին և Բառնաբասին իւր Բանի (Քրիստոսի) սպասաւորութեան գործի մէջ:

Սա ոմանց ընտրեց Առաքելութեան համար, ոմանց մարգարեսութեան, ոմանց հովուելու և քարոզելու. ինչպէս Մատաթեային դուրս

Եկաւ Առաքելով թեան վիճակը,
Ազգարեային և Տիմօլոթեային մար-
գարէութիւն, և Եփեսոսի Եկեղեցւոյ
երեցներին հովուով թիւն և վարդա-
պետով թիւն (բարոզով թիւն):

Զգուշ կացէք, ասում է, այդ
հօտին, որին ձեզ սուրբ Հոգին կար-
գեց տեսուչներ և վարդապետներ:

Այս արձակելով համարձակացրեց
մարմնեղին լեզուին կոչել Հօրը
Աստուած, որ նստում է հրեղին կառ-
քում, որին պաշտում են հրեղին ան-
մարմին բանակները (հրեշտակները):

Մենք ստացանք որդեգրու-
թեան Հոգին, որով աղաղակում
ենք Աբբայ Հայր:

Կոյն ինքն Հոգին վկայում է
մեր հոգւոյն, թէ մենք Աստուծոյ
որդիներ ենք:

Այս մէկին տալիս է բան իմաս-
տով թեան, մէկին բան զիտով թեան,
միւսին հաւատք սարերը փոփոխե-
լու, և մէկ ուրիշն զօրով թիւն զոր-
մանալի գործեր կատարելու:

Այս օծում է մեր մտքերը, ինչ-
պէս Յօհաննէսն է ասում, և շնումէ
քրիստոնեաներ և Քրիստոսին ըն-
դունողներ, և այս օծով թենից մենք
զօրանումենք ամենը զիտենալու
համար:

Այս լուսաւորում է մեր սրտերի
աչքերը, որ իմանանք մեր կոչման
յոյար, և փառքի ժառանգութեան
մէծով թիւնը, և Քրիստոսի սիրոյ
երկայնութիւն ու լայնութիւնը, ուս-
տի մենք արհամարհեցինք երևելի բա-
ները և փափաղում ենք աներեւոյթ-
ներին:

Եւ այս Հոգւովը Քրիստոս
մեղանում բնակվելով մեռցրեց մեղքի
հեշտութեան մարմնական զգայարան-
քը, և կենդանացրեց բանական հո-
գիները արդար խորհուրդների յու-
սով։ Որով մարդիկ զօրացած ոտի
տակտուին նեղութիւնը, հալածանքը,
սովը, մերկութիւնը, սուրբ, ինչ որ
կայ աշխարհիս վերայ և նոր լինելի
բաները, պայծառացած հոգւով Քր-
իստոսի սէրը գիտենալու համար։

Այս որ քննում է Աստուծոյ խո-
րութիւնները, քննում է և մարդկան
սրտերը, և տեսնելով մեր բնութեան
տկարութիւնը՝ համսում է մեր տկար
թիկունքին, և բարեխօսէ լինում դէպի
Աստուած լուռ անմոռնչ նեղութիւն-
ներում սուրբ եկեղեցիների համար։

Եւ ինքն՝ Աստուած սիրողնե-

րին ամեն բարեգործութիւնների մէջ
միշտ գործակից է լինում։ Ամենի
փրկութիւնն է կամենում, ամենի
հաւատքին է սպասում, որ հաւատ
ընծայելու ժամանակ՝ սերմանէ նո-
րանց մէջ շնորհք և հոգևոր զօրու-
թիւններ։

Կամենում էս իմանալ Այրա
սիրոյ չափը դէպի մարդիկ, զնա՛ մօ-
տեցի՛ր ներքնոյն կառքին, ինչպէս
մի ժամանակ Փիլիպպոսը մօտեցաւ,
և տե՛ս, թէ ինչպէս մի հաւատով
հարցմունքի փոխարէն ստացաւ
սուրբ Հոգին։

Տէ՛ր, ասաց Փիլիպպոսին, աղա-
ջումեմ քեզ, ասա՛, որի՞ համար
ասաց այս խօսքը մարդարէն, իրա՞
թէ մէկ ուրիշի՞ համար։

Այդ ուղիղ հարցմունքը ներք-

նոյն անձնի մէջ չողովն մտնելու դուռն եղեւ, և տեղ պատրաստեց Փիլիպպոսի խօսքերի համար, մինչև որ կանգնեց ջրի մօտ, չողին էլ ներքնոյն ուսուցել վերդալով աւելորդ համարեց մէկ էլ նեղութիւն տալ Փիլիպպոսին:

Այսպէս է սուրբ չողովոյ պահպանելը աշխարհին, այսքան է նորա միթարելը մարդկանց:

Ոչ Ամովքացւոյն է խորում (ջոկում), ոչ հեթանոսներին է անարդում, ոչ հրեաներին է յարգում, այլ ամենքին հաւասար չնորհը է բաշխում, և միայն փափազում է, որ մենք իրա շնորհի նիսթ՝ մեր յօժար սրտի հաւատը ընծայենք: Եւ նոյն զանազան շնորհի պայծառ ջահերովը եկեղեցւոյ մանկունքներին

լուսաւորում է, և շնորհըով վառած նորանց աշխարհիս հեշտութեան զբաղմունքից ձգտում է դէպի Երկնաւոր ծօր սէրը:

Ա ամս զի տղաներին խաղալիկ նշաններ լեզուախօսութիւնը ի հոգւոյն տուաւ, և կաթն մանուկներին բժշկութեան շնորհը և զօրութեանց յաջողութիւններ:

Խակ կատարեալներին մատակարարում է հաստատուն կերակուր, որ է Աստուծոյ սէրը, ինչպէս աղաղակում է նա, որ ճաշակեց: Ամէ ունենամ ամեն զիտութիւն և հաւատ մինչև անգամ սարելը փոփոխելու, և եթէ սէր չունենամ, օգուտ չեմ կարող լինել:

Այս և ցանկանում է աշակերտներին հետեւեալը ասելու ժամանակ-

թէ աղօթք եւ անում և ծունը եւ
պնում, որ դուք ստանաք ո՞չ թէ
հրաշագործութեան հոգի, այլ իմաս-
տութեան հոգի, որ լուսաւորում է
մոքի աչքը՝ Քրիստոսի սիրոյ լայ-
նութիւնը, բարձրութիւնը և խորու-
թիւնը իմանալու համար:

Այս պատճառաւ հրաշըների
և լեզուների ներգործութիւնը իբրև
անօգուտ պակասեցաւ, իսկ իմաս-
տութեան և զիտութեան հոգին
միշտ ներգործում է եկեղեցւոյ մէջ
և պայծառացնում է Քրիստոսի
սէրը նորա որդւոց հոգիների մէջ:

Ոչ որ չկարծէ, թէ Յիսուսին
Տէր կ'անուանէ, թէ որ յառաջ
նորանից ազդումն առած չի լինի:
Ապա թէ մէկը մօտենում է յառաջ
առանց այս հրամանի կոչմանը, Այ-

մն կախարդի պէս, որ էր փորձող
տուրք Հոգայն, այնպիսին Դաւթի
տաճարից կմերժուի:

Այսուր կնիք (փեշատ) կայ
Քրիստոսի սուրբ եկեղեցւոյ խրաքան-
չեր անդամների վերայ, որոնք ամուր
պահպանվում են դորանով շնորհըի
ամեն մի պատուի մէջ:

Որովհետեւ նա՝ որ հաստատեց
մեզ ձեզ հետ Քրիստոսումը, Աս-
տուած է, որ և կնքեց մեզ և տուաւ
մեր սրտերի մէջ Հոգւոյ առհաւատ-
չեան (դրաւը):

Ա արդապետ (քարողիչ) է ու-
սուցանելու և յիշել տալու Քրիստո-
սից ասվածներն, ինչպէս խոստա-
ցաւ, թէ երբ նա այսինքն ճշմարտու-
թեան Հոգին կ'գայ, կառաջնորդէ
ձեզ ամենը ճշմարտութենով:

Իմաստուն ճարտարապետ է, որ շինում՝ է օտարներին և պանդոխուներին մարդարեների և Առաքելոց հիմքի վերայ Քիստոսի կատարման հասակի չափը:

Մարդկան մտքերը ջբող շատ առատ գետ է, որ լիացնում է մեր իմաստութեան ակոսները (ծիրը վարած տեղը) և զուարթացնում է իրա ցօղովը (շաղով) առաքինութեան ծաղիկների զանազան բոյսերը, ինչպէս ասայ Քիստոս, իրա հաւատացեալների որովայնիցը (փորից) կրղիսէ Հոգիից գետ, որի համար առաջուց յայտնեց մարդարէն:

Արթուն վերակացու է այսինքն Եկեղեցւոյ կարգերը կարգադրող և որոշող իւրաքանչիւր աստիճանները և պատիւր, որ կարգեց առաջ-

Առաքեալներ. երկրորդ՝ մարգարէք. երրորդ՝ վարդապետներ. որոնց հետ զօրութիւններ և բժշկութեան շընորհներ, լեզուների տեսակներ և լեզուների թարգմանութիւններ:

Այս ներգործութեան Հոգին յօրինում է (կարգին շինում է) ասձարի աստիճանների դասակարգութիւնները երկնային դասերին մանութենով. հոգեոր երգով միշտ Աստուծոյ խօսակցութենով:

Այս Հոգին ծնանում է Քրիստոսի եկեղեցւոյ մանուկներին սրբար աւաղանի արդանդից Երկնաւոր Հօր որդեպրութեան համար:

Այս սուրբ Հոգին զօրացնում է բահանայապետների ձեռքերը՝ շնորհարաշխութեան, բահանաներին՝ նորիւրդործութեան, և սարկաւագ-

ներին՝ սուրբ Եղիղեցւոյն սպասաւորութեան համար:

Այս վեր է կացնում աթոռի համար ժառանգներ, պատուի համար եկեղեցականներ. ումանց կարգում է խօսելու պաշտօնի մէջ, ումանց ձայն հնչելու, ումանց զրքեր կարդալու:

Այրանով զօրացան վկաները (մարտիրոսվածները), զինուորվեցան նահատակները, քաջացան մարդիկը, արիացան կանայքը:

Այրա զօրութիւնը բղխում է խաչանիշ (խաչի նման) փայտերից զարմանքով, կառուցած յարկերից հրաշքներով, սուրբերի մասունքներից ամեն ցաւերի բժշկութիւն՝ չնորհրով:

Եցուած է ամեն երկիրը Այրա ողորմութենովը, օդն էլ մաքրեցաւ

Այրա իջանելու ժամանակ, «Աա մեզ չետ է միշտ, և մեր ամեն ինչ Այրա չնորհած (տուած) պարզեն է. Որոյ առաջին մենք ընկնելով մեր երեսի վերայ՝ մաղթենք արտասունքով»:

Ով Ատուած Ատուածանից և ամենին Նորոգող սուրբ Հոգինքո պահպանութեան իննամբին ապատան արաւ քաջ Հովիւր խր հօտը (սիւրոն), և տարածեց Քո ճառագայթները խր Եղիղեցւոյ մէջ մինչև յաւիտեան:

Քեզանով են շարժվում մեր լեզուները օրհնութիւն և փառարանութիւն տալու ժամանակները, և մեր անձները քեզանով կարգուեցան քո զանազան չնորհբիդ պաշտմանը ծառայելու:

Քեզ աղաչումենք ամեններս

միաբան և խօսում Ենք քեզ հետ
համարձակ մենք քո ծննդեան ար-
դանդի որդեներու. Մի զգուիր քո
հօտիցը գարշելի մեղքի հոտի պատ-
ճառաւ, այլ մնացի՞ր մեզ հետ հաշ-
տութենով մինչև վերջը, և ողեկից
լեր մեզ դէալի քո երկնային խո-
րանները:

Ավ Տէր. մեղ այս պանդուխտ
տեղերում արսորվածներիս պահպա-
նի՛ր թշնամիների նետերի խոցոտե-
լուց:

Սունինք զօրութիւն ճպնութեան մէջ հանողիաանալ ինդբումենք ազաշելով մի՛ թողիր մեզ որ ընկնենք գարանակալի չարութեան փորձանքի մէջ։ Հուր ծարաններիս ըստ սիրոյ արբեցութեան զինին որ բաժանուեցաւ այսօր սուրբ Ա եր-

Նատան մէջ Տուր, որ մխիթարուինք մեր տարտամ տիտոր գետնի վերայ բնակարաններումը, և պատրաստեալ կեանքիդ յոյս ապաստան գնենք:

Ով Բարերար, և այս նուերբը
որ քեզանից Քեզ օրէնութեան
բուրումնէ, հոտոտի՛ր սիրով դու ի՞մ
Աստուած-ով չեզութեան Հոգի:

Եւ քեզ միաբերան օրհնու-
թիւն մեզանից Հօր և Որդւոյ հետ
միասին յաւիտենական և անվախճան
կեանքիդ մէջ. ամէն:





Հայոց
1892

ՀՀ Ազգային գրադարան



NL0345078

